ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆԻ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ (ՆՈՅԵՄԲԵՐ-ԱՊՐԻԼ) ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Ի կատարումն 2022 թվականի նոյեմբերի 14-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 2.1.6-րդ կետի ներկայացնում եմ իմ կողմից կատարված աշխատանքների կիսամյակային (վեց ամսվա) հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից (ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշում) բխող Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվող աշխատանքներին:

2. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2022 թվականի միջոցառումների ծրագրի (պետական գույքին առնչվող) մշակման աշխատանքներին:

3. Մասնակցել եմ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի և «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակման աշխատանքներին:

4. Մասնակցել եմ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն շրջանառության մեջ դրված ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 14-ի N 304-Ն և ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն, ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209, ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու նախապատրաստական աշխատանքներին:

5. Մասնակցել եմ «Պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման պայմանագրերում ամրագրված պարտավորությունների և դրանց կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու գործընթացը կանոնակարգելու, ինչպես նաև գրավադրման պայմանները սահմանելու ու Հայաստանի Հանրապետության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1955-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքներին:

6. Մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին լիազորություններ վերապահելու և պետական կառավարման համակարգի մարմիններին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին հանձնված պետական սեփականություն համարվող շարժական գույքը հետ վերցնելու և այլ պետական կառավարման համակարգի մարմիններին ամրացնելու ու պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին հանձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակի աշխատանքներին:

7. Մասնակցել եմ «Պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար պետական սեփականություն հանդիսացող տարածքով ապահովելու կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի աշխատանքներին:

8. Մասնակցել եմ պետական գույքի 2017-2020թթ. մասնավորեցման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակմանը, որոնք ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:

9. Մասնակցել եմ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի տարեկան արդյունքների ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծությունների նախապատրաստական աշխատանքների իրականացմանը:

10. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի տարեկան կտրվածքով ներկայացվող հաշվետվությունների կազմման, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ-ի ծրագրի 2021 թվականի ու պետական գույքի կառավարման 2021-2023թթ-ի ծրագրի 2021 թվականի տարեկան հաշվետվությունների մշակման և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու աշխատանքներին:

11. Մասնակցել եմ «Պետական գույքի կառավարման մասին» նոր օրենքի նախագծի մշակման ուղղությամբ տարվող նախապատրաստական աշխատանքներին:

12. Փորձագիտական առաջարկություններ և եզրակացություններ եմ ներկայացրել մի շարք ՀՀ օրենքների նախագծերի և այլ իրավական ակտերի նախագծերի ու մշակված ռազմավարական փաստաթղթերի վերաբերյալ:

13. Մասնակցել եմ պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներին:

14. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի ներքին աուդիտի կազմակերպման աշխատանքներին:

15. Կատարել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի և Կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պետական գույքի կառավարման կանոնակարգմանն առնչվող հանձնարարականները, ինչպես նաև մասնակցել եմ պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության գործառույթներին վերաբերող մեթոդական բնույթի ընթացիկ աշխատանքների կատարմանը, մասնավորապես ՀՀ կառավարության կողմից ընդունված 2023 թվականի հունվարի 5-ի N 30-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու, գործունեության արդյունավետությունն որոշելու, գործադիր մարմինների

ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու կարգը կիրարկելու վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մշակմանը:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆ**

13.04.2023թ.